

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2018թ. I եռամսյակում ԱՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ

2018թ. I եռամսյակում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 60 առևտրային և 8 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 87-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 3-ի գործունեությունը՝ դադարեցվել:

1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում և 1 հիմնարկի առանձնացված ստորաբաժանում վերցվել են պետական հաշվառման: 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել է ընթացիկ պետական հաշվառման, իսկ 7-ի գործունեությունը՝ դադարեցվել:

7 հիմնարկ ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 233 անհատ ձեռնարկատեր, 40-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 11-ի գործունեությունը՝ դադարեցվել:

Ըստ գրասենյակների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

անվանում	իրավաբանական անձ			իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ			անհատ ձեռնարկատեր			ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	Լուծ/դադ.	սկզբ.	ընթ.	գործ. դադար.		
<i>Կենտրոնական մարմին</i>	8	10				1				19	130
<i>Ստեփանակերտ</i>	45	50	1	2	6	6	116	24	10	260	1500
<i>Մակերան</i>	3	5	2				19	3		32	141,5
<i>Հաղրութ</i>	3	4					12			19	111
<i>Մարտակերտ</i>	1	4					37	2	1	45	155
<i>Մարտունի</i>	1	7					26	6		40	146
<i>Շուշի</i>	5	2			1		10	2		20	135
<i>Քաշաթաղ</i>	2	5			1		13	3		24	110,5
Ընդամենը	68	87	3	2	8	7	233	40	11	459	2429

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից գրանցվել է 1 հատուկ թույլտվություն պահանջող ֆիրմային անվանում, որի համար գանձվել է 600 000 դրամ պետական տուրք:

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 150 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 3 179 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում I եռամսյակում արտաբյուջե է մտցվել 393 000 դրամ:

ԱՀ Նախագահի ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) 133 սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել ապառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սխտեմատիկ հսկողություն է իրականացվել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման նկատմամբ, տրվել ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

Գործակալության պետ՝
Կատարող՝ Ի. Առստամյան

Գ. Մաքսիմովա